



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



ԳԻՏ ԽԱՉԻ
25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ

(14.1-8)

Ուրիշ մը, որ ամեհի ալիքներուն ընդմէջէն նաւով ճամբորդելու կը պատրաստուի, փայտէ կուռքի մը կ'աղօթէ, փոխանակ վստահելու զինք փոխադրող նաւուն, որ թէպէտ շահու համար հնարուած է եւ ճարտար արհեստաւորի ձեռքով շինուած, սակայն դո՛ւն ես, ո՛վ Հայր, որ քու տեսչութեամբդ զայն կը վարես. դո՛ւն ես որ ծովուն մէջ ճամբայ կը բանաս եւ ալիքներուն մէջ՝ ապահով շաւիղ, եւ ատով իսկ ցոյց կու տաս թէ ամէն վտանգէ կրնաս փրկել, նոյնիսկ եթէ անփորձ ըլլայ ղեկի գլուխ կանգնողը:

Բայց քու կամքդ է՝ որ իմաստուն ստեղծագործութիւնդ մարդոց ծառայէ. ահա թէ ինչո՛ւ մարդիկ իրենց կեանքերը կը վստահին ամենափոքր փայտին, եւ նոյնիսկ լաստով մը ալիքները ճեղքելով ողջ-առողջ տեղ կը հասնին:

Արդարեւ, ջրհեղեղի ատեն ալ, երբ ամբարտաւան հսկաները կորուստի մատնեցիր, նոյ՛ն՝ աշխարհի յոյսը, լաստափայտին ապաւինեցաւ եւ քու ձեռքովդ առաջնորդուեցաւ, աշխարհի մէջ մարդկային սերունդը ապահովելու համար:

Հետեւաբար օրհնեալ է այն փայտը որ արդարութեան պատճառ կ'ըլլայ. բայց անհծեալ են թէ՛ ձեռագործ կուռքը եւ թէ՛ զայն շինողը, մէկը՝ զայն շինելուն համար, իսկ փուճ փայտը՝ աստուած կոչուելուն համար:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(33.22-34.1)

Տէ՛րն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

Այն ատեն, նաւերուդ պարանները պիտի փտին, կայմերը պիտի իյնան. ալ ո՛չ առագաստ պարզելու պէտք պիտի ըլլայ, ո՛չ ալ դրօշակ, եւ նաւերդ մնալէն պիտի քայքայուին:

Տէրը իր վարձատրութենէն պիտի չզրկէ ոեւէ մէկը, ճիշդ ինչպէս յաղթանակէ մը վերջ երբ ւաւարը մեծ ըլլայ՝ կաղերն անգամ անկէ բաժին մը կ'առնեն: Այն ատեն այլեւս յոգնութիւն եւ ցաւ գոյութիւն պիտի չունենան, որովհետեւ Տէրը պիտի ներէ իր ժողովուրդին մեղքերը:

Մօտեցէ՛ք, ո՛վ հեթանոսներ, եւ լսեցէ՛ք. ակա՛նջ դրէք, ո՛վ իշխաններ. թող երկրին բնակիչները եւ աշխարհի ժողովուրդները լսեն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.18-24)

Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն կը թուի կորստողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան դիմողներուն համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա: Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեմ, խելացիներուն խելքը պիտի կորսնցնեմ»: Այն ատեն ո՞ւր պիտի մնան իմաստունները կամ ուսեալները եւ կամ այս աշխարհի հարցերը քննող ճարտասանները: Չէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է: Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել հաւատացողները: Եւ քանի հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գալթակղութիւն է հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէտ նոյն այդ հրեաներէն եւ յոյներէն կանչուածները եւ դարձի եկածները Քրիստոսը կ'ընդունին որպէս Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(24.27-36)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Արծիւները կը հաւաքուին հոն ուր դիակ կայ:

Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ապա Մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծածայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդին գալուստը մօտ է: Վստա՛հ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»: